շրջանակներում աջակցելու և օժանդակելու պարտականություն:

Սույն գործով պատասխանող ՀՀ առողջապահության նախարարության կողմից չի հիմնավորվել, որ պատվիրատուն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում հայցվոր «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին տրամադրել է պայմանագրով նախատեսված տարածքը, ՀՀ առողջապահության նախարարությունը հաշվի չի առել, որ պայմանագրի կատարման ընթացքում ի հայտ չեն եկել այնպիսի հանգամանքներ, որոնց պարագայում «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն պարտավոր էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 714-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն անհապաղ նախազգուշացնել պատվիրատուին և մինչև նրանից ցուցում ստանալը դադարեցնել աշխատանքը:

Փաստերի նման դասավորվածության պայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ առողջապահության նախարարության կողմից պայմանագիրը միակողմանի լուծելը «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումներն իրավաչափ չեն և չի բխում սույն գործով հաստատված փաստերից:

Ամփոփելով վերոշարադրյալը և պատասխանողի կողմից այլ բան ապացուցված չլինելու պայմաններում՝ դատարանը հանգում է հետևության առ այն, որ հայցը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ինչ վերաբերում է կիրառված հայցի ապահովման միջոցին, ապա նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման՝ դատարանը գտնում է, որ վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից պետք է վերացնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 06.11.2025 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը:

<u>4. Դատական ծախսեր.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում՝ գրավոր միջնորդության տեսքով: Նման պահանջից հրաժարվելու կամ այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ հայցվորը դատական ծախսերի հետ կապված պահանջներ չի ներկայացրել, հետևաբար Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հատուցման հարցը պետք է համարել լուծված:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Պատասխանող Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջնորդությունը՝ քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին, մերժել:

2. «Գրիգորյան Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության՝ պայմանագիրը միակողմանի լուծելու գործողությունն ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք՝ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կորոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

2.1. Ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ առողջապահության նախարարության կողմից 20.10.2025 թվականի՝ «Առողջապահության նախարարության և «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի միջև 04.08.2021 թվականին կնքված «ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2021/2» պայմանագիրը միակողմանի լուծելու գործողությունը:

2.2. Որպես հետևանք՝ անվավեր ճանաչել ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի 30.10.2025 թվականի թիվ 6636-Ա հրամանը՝ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

3. Վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից վերացնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 06.11.2025 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը:

4. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա

ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE78-613D-458E-A6BB հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am